



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«15» *հունվարի* 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 614-Չ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
N 668-Ա ՀՐԱՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, 51-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով և հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 619-Ա հրամանով տրամադրված N 05 հավաստագիրը և N 05 հավաստագրի հավելվածը, ինչպես նաև հաշվի առնելով «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված 2022 թվականի հոկտեմբերի 4-ի և 2022 թվականի նոյեմբերի 29-ի գրությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 668-Ա հրամանով «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝

Ընկերություն) կողմից Երևան-Թեյ Ավիվ ուղղության համար տրամադրված արտոնության մասով չեն պահպանվել «Պետական տուրքի մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջները՝ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Ֆլայուան արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված արտոնության տրամադրման մասին» թիվ 668-Ա հրամանը «2021 թվականի դեկտեմբերի 28-ը՝ 36 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Թեյ Ավիվ/LLBG/ «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված արտոնության» մասով ուժը կորցրած ճանաչել:

2. «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2022 թվականի դեկտեմբերի 16-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Թեյ Ավիվ/LLBG/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, սույն կետում նշված երթուղիներով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 16-ը՝ 36 ամիս ժամկետով:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Восстановимая подпись

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ